ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1»

ք. Երևան «05» 09 2019 թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության շենքի** հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **20.12.2019թ**:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում **է 66483000 (վաթսունվեց միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ, որից 11080500 (տասնմեկ միլիոն ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011027191 ՀՎՀՀ 02631263	<<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Շիրակի փակուղի 4 <<Հայբիզբեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1150000285850100 ՀՎՀՀ 01807983 էլ. հասցե՝ agat-777llc@mail.ru հեռ. +374 94 94 85 84
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
«05» սեպտեմբերի 2019 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Ներքին շիանարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
	1-ին հարկ				
1	Լվացարանների ապամոնտաժում	հատ	13,000	0,480	6,24
2	Փայտե պատուհանագոգերի քանդում	մ^2	16,000	0,729	11,67
3	Դռների բլոկների տեղահանում	մ^2	64,300	1,193	76,72
4	Շրիշակների քանդում	գմ	344,000	0,012	4,03
5	Միջնապատերի քանդում	մ^3	9,500	8,122	77,16
6	Մանրահատակի քանդում	մ^2	57,200	0,548	31,35
7	Բետոնե հատակի քանդում	մ^3	16,300	16,727	272,65
8	Պահեստի կախովի առաստաղների քանդում	մ^2	79,400	1,102	87,52
9	Պատերի քերում լատեքսային ներկից	մ^2	907,000	0,153	138,34
10	Առաստաղի ատերի քերում լատեքսային ներկից	մ^2	418,600	0,153	63,84
11	Սալիկների քանդում	մ^2	48,000	0,429	20,59
12	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	53,302	3,627	193,31
	2-րդ հարկ				
13	Լվացարանների ապամոնտաժում	հատ	18,000	0,480	8,64
14	Փայտե պատուհանագոգերի քանդում	մ^2	29,000	0,729	21,15
15	Դռների բլոկների տեղահանում	մ^2	89,000	1,193	106,19
16	Շրիշակների քանդում	գմ	420,000	0,012	4,92
17	Միջնապատերի քանդում	մ^3	20,000	8,122	162,45

18	Մանրահատակի քանդում	մ^2	159,500	0,548	87,43
19	Պատերի քերում լատեքսային ներկից	մ^2	1033,000	0,153	157,55
20	Առաստաղի ատերի քերում լատեքսային ներկից	մ^2	498,200	0,153	75,99
21	Սալիկների քանդում	մ^2	37,000	0,429	15,87
22	Միջանցքի երկաթե վիտրաժի և մետաղական բազրիքի ապամոնտաժում	տն	0,070	35,795	2,51
23	Միջանցքի բետոնե հատակի քանդում /4 սմ/ 26.5մ2	մ^3	1,060	16,727	17,73
24	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	42,570	3,627	154,39
	Շին վերանորոգման աշխատանքներ				
	1-ին հարկ				
25	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ^2	45,000	4,038	181,72
26	Е8-59	տն	0,090	528,201	47,54
27	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 14.9մ2	մ^3	2,980	38,003	113,25
28	Միջնորմների բարձրորակ գաջե սվաղ	մ^2	119,000	3,280	390,35
29	Պատերի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	907,000	2,123	1925,97
30	Առաստաղի բ/որակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	419,000	2,385	999,30
31	Ներքին դռների բլոկների տեղադրում /ՄԴՖ/ /1-ին և 2-րդ հարկեր/	մ^2	66,900	53,590	3585,19
32	Ներքին փայտե դռների բլոկների տեղադրում /1-ին և 2-րդ հարկեր/	մ^2	14,100	89,709	1264,90
33	Մ/պլաստե դռների տեղադրում /1-ին և 2-րդ հարկեր/	մ^2	17,900	47,477	849,84
34	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ^2	16,000	13,137	210,19
35	Առաստաղի երեսպատում 12.5մմ հաստությամբ գիպսոկարտոնից ստատներով	մ^2	79,400	6,339	503,29
36	Մ/պլաստե պատուհանների տեղադրում բացվող հատված /վնասված պատուհանների փոխում /	մ^2	24,000	44,123	1058,94
37	Թուջե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	1մարտ	27,000	1,194	32,24
38	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ^2	13,300	1,328	17,66
39	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /սանհանգույց/	մ^2	13,300	10,858	144,41
40	Ներքին պատերի բ/որակ ց/ավազե սվաղ	մ^2	63,000	2,605	164,12
41	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	63,000	13,100	825,29
42	Սանհանգույցի պլաստմասե կախովի առաստաղի պատրաստում ստատներով	մ^2	13,300	6,244	83,04
43	Գոյություն ունեցող մանրահատակի հղկում	մ^2	148,200	0,390	57,80
44	Ֆասերայի պատրաստում	մ^2	122,50	3,889	476,45
45	Հաճարի փայտից մանրահատակի պատրաստում	մ^2	122,500	7,623	933,82

46	Փայտե շրիշակների տեղադրում	գմ	324,000	0,978	316,96
47	Մանրահատակի 2 շերտ լաքապատում /այդ թվում գոյություն ունեցող մանրահատակի/	մ^2	270,700	0,597	161,51
48	Շրիշակների 2 շերտ լաքապատում	մ^2	22,680	0,597	13,53
49	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ /միջանցք/	մ^2	108,000	1,328	143,44
50	Պ/գրանիտե հատակների պատրաստում /միջանցք/	մ^2	122,200	18,750	2291,25
51	Բազալտե աստիճանների հղկում	մ^2	15,100	6,738	101,74
52	Մ/պլաստե պատուհանների տեղադրում /Միակողմանի թափանցելիությամբ ապակիով /	մ^2	2,250	48,221	108,50
53	Տրավերտինե բազրիքների տեղադում 130x60մմ	գմ	9,200	13,197	121,41
54	Տրավերտինե բազրիքի ձևավոր կանգնակներ	հատ	23,000	9,692	222,92
	2-րդ հարկ				
55	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ^2	49,200	4,038	198,68
56	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,098	528,201	51,97
57	20 սմ հաստությամբ պ/բլոկե պատերի շարվածք , անցքերի բետոնացմամբ և ամրանավորումով 5.9մ2	մ^3	1,180	38,003	44,84
58	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,024	528,201	12,47
59	Միջնորմների լավորակ գաջե սվաղ	մ^2	98,400	3,280	322,77
60	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	1033,000	2,123	2193,52
61	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	498,200	2,385	1188,19
62	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ^2	29,000	13,137	380,96
63	Առաստաղի երեսպատում 12.5մմ հաստությամբ գիպսոկարտոնից ստատներով /կոնֆերենց դահլիճ/	մ^2	79,400	6,339	503,29
64	Մ/պլաստե պատուհանների տեղադրում բացվող հատված /վնասված պատուհանների փոխում /	մ^2	43,000	44,123	1897,28
65	Թուջե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	1մարտ	32,000	1,194	38,22
66	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ^2	6,000	1,328	7,97
67	Կերամիկ սալերից հատակի պատրաստում /սանհանգույց/	մ^2	6,000	10,858	65,15
68	Ներքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ^2	18,440	2,605	48,04
69	Պատերի երեսպատում հախճասալով	մ^2	18,440	13,100	241,56
70	Սանհանգույցի պլաստմասե կախովի առաստաղի պատրաստում ստատներով	մ^2	6,000	6,244	37,46
71	Գոյություն ունեցող մանրահատակի հղկում	մ^2	291,100	0,390	113,53
72	Ֆաներայի պատրաստում	մ^2	153,40	3,889	596,64
73	Հաճարի փայտից մանրահատակի պատրաստում	մ^2	153,400	7,623	1169,38
74	Փայտե շրիշակների տեղադրում	գմ	370,000	0,978	361,96

75	Մանրահատակի 2 շերտ լաքապատում /այդ թվում գոյություն ունեցող մանրահատակի/	մ^2	444,500	0,597	265,21
76	Շրիշակների 2 շերտ լաքապատում	մ^2	25,900	0,597	15,45
77	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ /միջանցք/	մ^2	107,700	1,328	143,04
78	Պ/գրանիտե հատակների պատրաստում /միջանցք/	մ^2	27,000	18,750	506,25
79	Միջանցքի քարե պատի հղկում և լաքում	մ^2	30,900	7,361	227,44
80	Տանիքի մտոցի դռնակի փոխարինում մետալոպլաստե դռնակով	մ^2	0,600	51,740	31,04
	Արտաքին շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	գմ	39,000	0,849	33,13
2	Գոյություն ունեցող ասֆալտի քերում	մ^2	456,000	0,058	26,41
3	Գոյություն ունեցող բետոնյա սալահատակի քանդում	մ^3	25,600	1,867	47,80
4	Գոյություն ունեցող ավտոտնակի ապամոնտաժում /տարածական ծավալով/	մ^3	56,60	4,460	252,42
5	Գոյություն ունեցող բազալտե թասակների քանդում	մ^2	6,000	3,919	23,52
6	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների քանդում	գմ	40,000	1,059	42,35
7	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների քանդում	մ^2	53,000	3,919	207,72
8	Արտաքին աջակողմյան աստիճանների քանդում	մ^2	2,400	3,919	9,41
9	Արտաքին հատավոր բետոնյա աստիճանների ապամոնտաժում 1250x300x150, 21հատ	գմ	26,250	1,059	27,79
10	Մետաղական դարպասների ապամոնտաժում	տն	1,600	41,963	67,14
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	139,146	3,627	504,65
	Շին վերանորոգման աշխատանքներ				
12	Բազալտե աստիճանների տեղադրում /մուտք/	գմ	1,200	9,588	11,51
13	Հատակների երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /մուտք/	մ^2	53,000	15,258	808,66
14	Տուֆե հուշապատի հղկում	մ^2	24,000	6,738	161,71
15	Բազալտե թասակներ 80 մմ հաստությամբ	մ^2	6,000	43,036	258,21
16	Միաձույլ ե/բ թեքահարթակի պատրաստում B-15 դասի բետոնից	մ^3	5,600	46,030	257,77
17	Ամրանային ցանց ϕ5 Bp-I	տն	0,022	540,731	11,90
18	Թեքահարթակի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով /մուտք/	մ^2	11,200	15,258	170,89
19	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ^3	1,720	13,651	23,48
20	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x30սմ	գմ	86,000	11,088	953,57
21	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ^3	0,740	13,651	10,10

22	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 10x20սմ	գմ	74,000	7,973	590,03
23	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	$մ^3$	17,670	13,651	241,22
24	B-15 դասի բետոնից նախապատրաստական շերտ 5սմ հաստությամբ	$մ^3$	8,835	43,584	385,06
25	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	$մ^3$	8,835	13,910	122,90
26	Բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	$մ^2$	176,70	5,979	1056,52
27	Խճի շերտի պատրաստում 15սմ հաստությամբ	$մ^2$	301,000	1,560	469,56
28	Խոշորահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 6սմ հաստությամբ	$մ^2$	301,000	4,574	1376,68
29	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	$մ^2$	301,000	4,268	1284,68
30	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	$մ^2$	381,000	4,268	1626,12
31	Քրքատաշ բազալտե քարերի վերականգնում	$մ^2$	1,670	27,836	46,49
32	Հենապատի ց/ավազե սվաղ ցանցով սմ հաստությամբ	$մ^2$	90,000	5,210	468,88
	Դարպաս				
33	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից /դարպասի համար/	$մ^3$	0,640	56,582	36,21
34	Միաձույլ ե/բ սյուների պատրաստում B-20 դասի բետոնից /դարպասի համար/	$մ^3$	0,460	103,855	47,77
35	Ամրանի արժեքը Ac-1 D8մմ դասի	տն	0,037	470,152	17,40
36	Ամրանի արժեքը A500c D10մմ դասի	տն	0,002	472,998	0,95
37	Ամրանի արժեքը A500c D16մմ դասի	տն	0,095	458,767	43,58
38	Ամրանային ցանց ϕ4 Bp-I	տն	0,010	540,731	5,41
39	Մետաղական դարպասի պատրաստում և տեղադրում 60x60x3մմ, 10x10x1մմ մետաղական խողովակներից, 750x640x1մմ, 150x150x10մմ մետաղական թերթերից	տն	0,418	73,054	30,57
40	60x60x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	49,200	2,811	138,32
41	10x10x1մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	52,000	0,235	12,22
42	Մետաղական թերթ 750x640x1մմ-36հատ	տն	0,136	599,548	81,33
43	Մետաղական թերթ 150x150x10մմ-6հատ	տն	0,011	599,548	6,35
44	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,418	37,536	15,71
	Շվաքարան				
45	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-20 դասի բետոնից	$մ^3$	1,220	64,074	78,17
46	Ամրանի արժեքը A500c D12մմ դասի	տն	0,033	463,036	15,28
47	Մետաղական սյուների տեղադրում 140x140x4մմ մետաղական խողովակներից, 200x200x10մմ-10հատ մետաղական թերթից	տն	0,247	60,506	14,97
48	140x140x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	12,800	8,934	114,36
49	Մետաղական թերթ 200x200x10մմ-10հատ	տն	0,031	599,548	18,83

50	Մետաղական հեծանների տեղադրում N14, N18 շվելերներից	տն	0,819	80,028	65,57
51	N18 մոտաղական շվելերի արժեքը	գմ	23,100	10,086	232,98
52	N14 մոտաղական շվելերի արժեքը	գմ	36,000	7,562	272,25
53	40x40x2.5մմ ուղղանկյուն խողովակներից կավառամածի պատրաստում	տն	0,288	74,181	21,35
54	40x40x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	101,000	1,070	108,03
55	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1,355	37,536	50,84
56	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.6մմ հաստությամբ КП-60-0.6մմ	$մ^2$	56,000	6,154	344,65
57	Բետոնե հատավոր աստիճանների տեղադրում 1250x300x150-21հատ	գմ	26,250	6,023	158,10
58	Մետաղական բազրիքի 2շերտ ներկում	$մ^2$	36,000	1,191	42,87
59	Փայտե բազրիք ջրակայուն լաքով 50x50 չորսու	գմ	33,000	11,885	392,21
60	Կողային մետաղական աստիճանների մաքրում մետաղական խոզանակով	$մ^2$	16,400	1,139	18,68
61	Կողային մետաղական աստիճանների 2շերտ ներկում	$մ^2$	16,400	1,191	19,53
62	Անցքերի շաղափում պատերում	հատ	9,000	0,389	3,50
63	Դյուբել պտուտակամեխ D10մմ	հատ	9,000	0,751	6,76
64	20x40x2մմ ուղղանկյուն խողովակներից կավառամածի պատրաստում	տն	0,015	74,181	1,13
65	20x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	9,000	0,945	8,51
66	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,015	37,536	0,57
67	Հովհարի ծածկույթի պատրաստում պոլիկարբոնատից	$մ^2$	2,400	7,941	19,06
68	Հետին արտաքին աստիճանների շվաքարանի կախովի առաստաղի փոխում /պլաստմաս/	$մ^2$	5,100	6,244	31,84
69	Տանիքի հարթ թիթեղի վերանորոգում КП-60-0.6մմ/փոխարինում/	$մ^2$	15,000	7,770	116,55
70	Պարագծով տանիքի թիթեղի տակ արցունքաթափի տեղադրում КП-35-0,60մմ	$մ^2$	16,500	6,675	110,14
71	Արտաքին տուֆե պատերի հղկում	$մ^2$	393,000	6,738	2648,00
72	Հետին ճակատի ց/ա սվաղի ներկում ջրակայուն ներկով	$մ^2$	261,000	0,848	221,40
73	Միջպատուհանային հատվածների լավորակ ց/ավազե սվաղ	$մ^2$	29,000	1,461	42,38
74	Նույնի ներկում ջրակայուն ներկով	$մ^2$	29,000	0,848	24,60
75	d=100մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (98գմ)	կ-տ	10,000	38,408	384,08
76	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	5,000	7,024	35,12
77	Աբդամանների տեղադրում ամրացումով	հատ	4,000	3,512	14,05
	Էլեկտրալուսավորություն /9հատ/ H=3.5մ				
78	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	4,500	3,958	17,81

79	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	2,700	0,888	2,40
80	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	3,330	3,627	12,08
81	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	1,800	58,274	104,89
82	102x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0,070	94,820	6,60
83	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	7,200	5,177	37,28
84	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	9,000	14,689	132,20
85	89x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	31,500	4,527	142,60
86	40x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	27,000	1,613	43,56
87	Մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	3,600	1,191	4,29
88	Լուսատու գնդային	հատ	18	15,937	286,86
89	АВВГ 4x16մմ2 մալուխի անցկացում խրամուղով գոֆրե խողովակով	գմ	120,000	0,979	117,44
90	Գոֆրե խողովակի անցկացում խրամուղով D32մմ	գմ	120,000	0,538	64,60
91	АВВГ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	գմ	31,500	0,249	7,83
92	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	9,000	0,683	6,15
93	Մեկուսիչ Ընկույզ	հատ	9,000	0,956	8,61
94	Բաժանարար մետաղական տուփիկ	հատ	9,000	2,049	18,44
95	Մուտքային հանգույցի շվաքարանի սյուների երեսպատում 30մմ հաստությամբ տուֆե սալերով /կորացված/	$մ^2$	1,600	22,523	36,04
96	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ տուֆե սալերով մառուտքային հանգոյցի ճակատ/	$մ^2$	12,400	18,051	223,83
97	Պատերի քիվաքարի շարվածք ձևավոր տուֆե քարերից	գմ	11,000	44,004	484,05
98	Արտաքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ	$մ^2$	20,900	1,461	30,54
99	Նույնի ներկում ջրակայուն ներկով	$մ^2$	20,900	0,848	17,73
100	Տանիքի փայտածածկի իրականացում /կավառամածով/	$մ^3$	0,300	247,599	74,28
101	Տանիքածածկույթի պատրաստում 0.6մմ հաստությամբ ց/պրոֆիլավոր թիթեղից КП-60-0.6մմ	$մ^2$	21,000	6,417	134,75
102	d=70մմ ջրահեռացման ուղղանկյուն խողովակների տեղադրում (8գմ) /գունավոր/	կ-տ	2,000	25,768	51,54
107	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	51,000	2,584	131,80
108	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	61,200	6,343	388,21
109	Բուսահողի փռում ձեռքով	$մ^2$	255,00	0,353	90,09
110	Սիզամարգերի տեղադրում	$մ^2$	255,00	0,183	46,75
	Ցանկապատ				
107	80x80x3մմ մետաղական խողովակներից 120x120x8մմ մետաղական թեթերից ցանկապատի կարկասի պատրաստում	տն	0,179	78,646	14,06

104	80x80x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	20,000	3,814	76,28
105	Մետաղական թերթ 120x120x8մմ-40հատ	տն	0,036	599,548	21,69
106	Մետաղական դյուբել D10մմ	հատ	40,000	0,478	19,12
107	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,179	37,536	6,71
108	Ցինկապատ պրոֆիլ թիթեղից ծածկույթի պատրաստում 0.6մմ հաստությամբ КП-60-0.6մմ	$մ^2$	60,000	12,794	767,62
	Ջրամատակարարում, կոյուղի, ջեռուցում				
	Ներքին ջրամատակարարման ցանց				
1	Մ/պլաստե խողովակաշարի տեղադրում Φ20մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով	գմ	48,000	2,581	123,90
2	Մ/պլաստե խողովակաշարի տեղադրում Φ15մմ,լվացումով, քլորացումով ,փորձարկումով	գմ	24,500	2,543	62,31
3	Մ/պլաստե խողովակների ձևավոր մասեր	հատ	33,000	0,342	11,27
4	Փականների տեղադրում Φ15մ	հատ	8,000	4,182	33,46
5	խոհանոցակոնքի ծորակներ-խառնիչների տեղադրում	հատ	1,000	6,139	6,14
6	Լվացարանի ծորակներ-խառնիչների տեղադրում	հատ	6,000	6,139	36,83
7	Ոչ ստացիոնար տաղակայված ցնցուղի խառնարան	հատ	1,000	9,554	9,55
8	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկի համար D15մմ L=0.5մ	հատ	5,000	1,093	5,46
	Ներքին կոյուղու ցանց				
9	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	63,000	1,870	117,81
10	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ50մմ /փորձարկումով/	գմ	17,600	1,195	21,04
11	Զուգարանակոնք թեք թողարկով ցածր տեղակայված լվացման տակառիկով	հատ	6,000	30,581	183,49
12	Լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	6,000	20,664	123,98
13	Խոհանոցակոնքի տեղադրում սիֆոնով	հատ	1,000	22,699	22,70
14	Լողախցիկի տեղադրում սիֆոնով	կ-տ	1,000	251,830	251,83
15	Արծնապատ հոսակի տեղադրում Φ50մմ	հատ	5,000	6,771	33,85
16	Պոլիվինիքլորիդե ստուգիչի տեղադրում D110մմ	հատ	5,000	2,101	10,51
17	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում D110մմ	հատ	33,000	1,417	46,75
18	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում D50մմ	հատ	19,000	1,075	20,43
	Արտաքին ջրամատակարարում և կոյուղի				
19	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	4,200	3,745	15,73
20	Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում	$մ^3$	0,230	4,724	1,09
21	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա	$մ^3$	0,470	3,893	1,83

22	3-րդ կարգի բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	3,500	1,085	3,80
23	Ավելցուկային բնահողի հարթեցում տեղում	$մ^3$	0,700	1,085	0,76
24	Ջրաչափ տեղադրում D20մմ	հատ	1,000	13,703	13,70
25	Ֆիլտր D20մմ	հատ	1,000	2,126	2,13
26	Փականների տեղադրում Φ20մմ	հատ	1,000	4,486	4,49
27	Միացում գործող ջրագծին	տեղ	1,000	2,436	2,44
28	Ե/բետոնե հավաքովի էլեմենտներից կոյուղու կլոր դիտահորի պատրաստում Φ1,0մ H=1.5մ 1հատ	$մ^3$	1,300	140,010	182,01
29	Թուջե մտոց	հատ	1,000	75,133	75,13
30	Հորի մետաղական աստիճանի տեղադրում	տն	0,010	764,725	7,65
31	Դիտահորի ամրացման մետաղական մասեր	տն	0,020	692,213	13,84
32	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0,030	37,536	1,13
	Ջեռուցում				
33	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=800մմ	էկմ	171,920	0,673	115,69
34	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց	614,000	6,752	4145,99
35	Մարտկոցների ամրացման դետալներ	հատ	118,000	0,570	67,22
36	Մարտկոցների փականների տեղադրում վերևի D20մմ	հատ	59,000	4,789	282,55
37	Մարտկոցների փականների տեղադրում ներքևի D20մմ	հատ	59,000	4,827	284,81
38	d=15-50 մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	զմ	320,000	0,328	104,81
39	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0,576	3,627	2,09
40	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20մմ,փորձարկումով	զմ	320,000	2,896	926,57
41	Պոլիպրոպիլենային ձևավոր մասեր	հատ	380,000	0,096	36,34
42	Փականների տեղադրում Φ20մմ	հատ	12,000	4,486	53,83
43	Օդորակիչի տեղադրում	հատ	10,000	56,181	561,81
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
1	Մուտքային արկղ ЯБПВУ-4Уз	հատ	1,000	33,450	33,45
2	Պահարան դռնակով վահանների կոմպլեկտավորման համար /1250x600x600/ IP40	հատ	1,000	224,675	224,68
3	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 80Ա DRXtm Legrand	հատ	1	119,329	119,33
4	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 63Ա DRXtm Legrand	հատ	2	90,992	181,98
5	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 50Ա DRXtm Legrand	հատ	6	56,840	341,04
6	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա TX tm Legrand	հատ	16	5,175	82,80
7	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա TX tm Legrand	հատ	10	6,268	62,68
8	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 32Ա TX tm Legrand	հատ	12	7,907	94,88

9	Լուսատու 36վտ IP20 595x595x40 3600лм 4500к	հատ	84,000	15,627	1312,70
10	Լուսատու դիոդային լամպերով 7վտ IP44 սանհանգույցների համար	հատ	25,000	8,218	205,44
11	Լուսատու դիոդային լամպերով 80վտ IP20 1220x630x70 4800лм 4600к	հատ	33,000	22,868	754,63
12	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով Legrand	հատ	100,000	5,521	552,12
13	Խցակի վարդակ երկբևեռ հողանցիչով Legrand երկտեղանի	հատ	112,000	7,434	832,57
14	Անջատիչների տեղադրում մեկստեղնավոր Legrand	հատ	36,000	5,223	188,02
15	Անջատիչների տեղադրում երկստեղնավոր Legrand	հատ	21,000	7,670	161,07
16	Տուփ անջատիչների և վարդակների համար	հատ	57,000	0,171	9,73
17	Տուփ երկտեղանի վարդակի տեղադրման համար	հատ	21,000	0,273	5,74
18	Տուփ ճյուղավորիչ	58	21,000	0,342	7,17
19	ՊՊՎԳ 3x4մմ պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով հաղորդալարի անցկացում	գմ	420,000	0,850	356,96
20	ՊՊՎԳ 3x2.5մմ պղնձե մեկուսացված բաժանիչ հիմքով հաղորդալարի անցկացում	գմ	840,000	0,520	437,19
	Հակահրդեհային, համակարգչային, հեռուստատեսության ցանց և ռադիոկապ, տեսահսկում				5679,48
	Ընդամենը				**70758,68**
	Շահույթ	**11%**			**7783,45**
	Ընդամենը				**78542,13**
	Սարքավորումներ				**1852,00**
	ԱԱՀ	**20%**			**16078,83**
	Ընդամենը				**96472,96**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Վանաձոր քաղաքի Ամիրյան 10 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն,
Հ/Հ 900011027191
ՀՎՀՀ 02631263

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրակի փակուղի 4
<<Հայբիզբեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
էլ. հասցե՝ agat-777llc@mail.ru
հեռ. +374 94 94 85 84

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 05 » սեպտեմբերի 2019 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20.12.2019թ
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20.12.2019թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011027191
ՀՎՀՀ 02631263

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրակի փակուղի 4
<<Հայբիզբեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
էլ. հասցե՝ agat-777llc@mail.ru
հեռ. +374 94 94 85 84

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 05 » սեպտեմբերի 2019 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/1	այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում									49862250	66483000	66483000	66483000	66483000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011027191
ՀՎՀՀ 02631263

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Շիրակի փակուղի 4
<<Հայբիզբեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
էլ. հասցե՝ agat-777llc@mail.ru
հեռ. +374 94 94 85 84

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 05 » սեպտեմբերի 2019 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 05 » սեպտեմբերի 2019 թ. կնքված
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-ԼՇ-19/1.1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն